Վերահսկել տեխնոլոգիաների օգտագործումը

Բաժին 1: Խելամիտ չափով ժամանակ ծախսեք տեխնոլոգիաների վրա

Վարդապետություն և Ուխտերում Տերը օգտագործում է «ջերմեռանդ ներգրավված» և «ծույլ» արտահայտությունները:

- Ձեր կարծիքով, ի՞նչ են նշանակում այս արտահայտությունները:

Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները և խորհեք, թե ինչ է Տերը ուսուցանում ջերմեռանդ ներգրավվածության և ծույլ լինելու մասին. Վարդապետություն և Ուխտեր 58.27–28, 60.13, 68.31, 75.3:

- Ինչպե՞ս կամփոփեք Փրկիչի ուսուցանածը:

(Մի քանի ճշմարտությունների թվում կարող եք բացահայտել այսպիսի ճշմարտություն. Տերը ցանկանում է, որ մենք ջերմեռանդ ներգրավված լինենք բարիք գործելու մեջ և ծուլությամբ չվատնենք մեր ժամանակը:)

- Ինչպե՞ս կարող ենք հասկանալ՝ արդյոք ծուլությամբ ենք վատնում մեր ժամանակը տեխնոլոգիաների վրա:

Ուսումնասիրեք հետևյալ խոսքերը՝ փնտրելով գաղափարներ տեխնոլոգիաների օգտագործումը վերահսկելու վերաբերյալ:

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է.

> Ոչ հասուն կամ մոլորված [մարդը] կարող է չափազանց շատ ժամանակ տրամադրել վիդեոխաղերին, համացանցում շփվելուն կամ այլ եղանակներով թույլ տալ, որ թվային տեխնոլոգիաները գերիշխեն կյանքի իրական երևույթների վրա՝ ինչպիսին որ դրանք կան: Սկզբում ժամանակի հատկացումը կարող է թվալ համեմատաբար անվնաս և ռացիոնալ, որպես մի քանի րոպե անհրաժեշտ հանգիստ՝ օրվա լարված գրաֆիկում: Սակայն այդ պարագայում բաց են թողնվում միջանձնային շփման հմտությունների զարգացման և կատարելագործման կարևոր հնարավորություններ: . . . Աստիճանաբար, անմեղ թվացող զվարճանքը կարող է վերածվել կործանարար ստրկության տեսակի: (Դեյվիդ Ա. Բեդնար, «Things as They Really Are», *Ensign,* հունիս 2010, 21)

- Ի՞նչ պատճառներ են մարդիկ բերում՝ տեխնոլոգիաների վրա ժամանակի վատնումը արդարացնելու համար:
- Ի՞նչն է օգնում ձեզ խուսափել տեխնոլոգիաների վրա ձեր ժամանակը ծուլությամբ վատնելուց:
- Ինչպե՞ս կարող եք Տիրոջը ներգրավել տեխնոլոգիաների խելամիտ օգտագործման ձեր ջանքերը վերահսկելու գործում:

Բաժին 2: Օգտակար մեդիաաղբյուրների ընտրություն

- Ինչպիսի՞ մեդիաաղբյուրներ եք դուք պարբերաբար ընտրում:
- Ի՞նչ եք դուք սովորել ձեր փորձառությունից, որը կարող է օգնել ձեզ ավելի մոտ մնալ Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին՝ մեդիաաղբյուրներ ընտրելիս:

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 50.23–24, Հավատո Հանգանակը 1.13 և Մորոնի 7.12–17 հատվածները՝ փնտրելով ճշմարտություններ, որոնք կարող են օգնել մեզ դատել, թե ինչն է բարին և ինչը՝ չարը:

- Ի՞նչ ճշմարտություններ եք գտնում այս հատվածներում:

(Մի քանի ճշմարտությունների թվում կարող եք նշել հետևյալ ճշմարտությունը. Այն, ինչը խրատում և համոզում է բարիք գործել՝ Աստծուց է:)

- Այս ճշմարտության կիրառումը ինչպե՞ս կարող է օգտակար լինել, երբ ընտրում եք, թե ինչ մեդիաաղբյուր օգտագործել:

Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը առաջարկել է, որ ինքներս մեզ տանք հետևյալ հարցը՝ մեր օգտագործած մեդիաաղբյուրների վերաբերյալ.

> Տարբեր տեխնոլոգիաների և մեդիաաղբյուրների օգտագործումը հրավիրո՞ւմ է Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունը ձեր կյանքում, թե՞ խանգարում է դրան: (Դեյվիդ Ա. Բեդնար, «Things as They Really Are,» *Ensign,* հունիս 2010, 23)

- Ինչպե՞ս կարող եք հրավիրել Սուրբ Հոգուն՝ լրատվամիջոցների ընտրություն կատարելիս:
- Ի՞նչն է օգնում ձեզ խուսափել այն մեդիաաղբյուրներից, որոնք կարող են հեռացնել ձեզ Փրկչից:

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_554-1